

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնի փորձագետ Աշխեն Ալեքսանյանի 2019 թվականի դեկտեմբերի 11-ից 2020 թվականի հունիսի 10-ը աշխատած ժամանակահատվածի համար

Ես՝ Աշխեն Ալեքսանյանս Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնում որպես փորձագետ աշխատում եմ 2019 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N 41 պայմանագրի համաձայն: 2019 թվականի դեկտեմբերի 11-ից 2020 թվականի հունիսի 10-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Առաջարկություններ եմ ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ քրեական, քրեակատարողական, քրեական դատավարության օրենսգրքերում և «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

2. Պատասխաններ եմ ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատման և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածով Պրոբացիայի ոլորտն ընդգրկող միջոցառումների կատարման վերաբերյալ:

3. Պատասխանել եմ Պրոբացիայի ծառայությունում ստացված պաշտոնական գրություններին, ինչպես նաև քաղաքացիների, պրոբացիայի շահառուների դիմումներին և բողոքներին:

4. Մասնակցել եմ պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աշխատանքներին, պրոբացիայի շահառուների համար իրականացրել եմ թարգմանչական (պարսկերեն-հայերեն, հայերեն-պարսկերեն) աշխատանքներ:

5. Մշակել եմ մի շարք հուշագրեր պրոբացիայի շահառուների համար՝ մշակութային, կրթական միջոցառումներին և ծրագրերին մասնակցությունն ապահովելու նպատակով:

6. Մշակել և Պրոբացիայի ծառայության պետի հաստատմանն են ներկայացրել պրոբացիայի ոլորտին վերաբերող մի շարք որոշումներ:

7. Մշակել և ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացրել պրոբացիայի շահառուների համար վերասոցիալականացման միջոցառումների և ծրագրերի անցկացման վերաբերյալ մոդելներ:

8. Ուսումնասիրել և կարծիք են ներկայացրել Պրոբացիայի աջակցության ծրագրի վերաբերյալ, մասնավորապես՝ Պրոբացիայի ղեկավար անձնակազմի, պրոբացիայի ծառայողների և դրանց մասնագիտական վերապատրաստման ձեռնարկների վերաբերյալ:

Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի
կազմակերպամեթոդական բաժնի փորձագետ



Աշխեն Ալեքսանյան

10.06 2020թ